

15552


№ 31 ԿՈՄՅԵՐԻՏԱԿՈՆ ԴՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 31

Զ. ԱՇԽԱՑԱՆ

ՀԵԿԱՎԱՐԱՀՈՎՔ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1926



26 SEP 2006

335-3
W-GS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարքեր բոլոր յերկրների, միացնել:

2 NOV 2006

№ 31 ԿՈՄՅԵՐԻ ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 31

Զ. ԱՇՐԱՖՅԱՆ

ՈՎԸ
ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

528



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՈՒՆ

1926

ԽՈՐՀԻՇԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Հոկտեմբերյան մեծ հեղափողությունից հետո 1920 թվի նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում յերկրի ամքողջ իշխանությունը հանձնեց Հայաստանի բանվորներին և գյուղացիներին:

Այլևս հայ բանվորը և հայ գյուղացին հանդիսանում են յերկրի միակ տերը. իրենց կյանքի ու աշխատանքի կազմակերպողներն ու տընորինողները:

Հայաստանը հայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն և միանալով Սոցիալիզմի համար պայքարող միջազգային բանակին, կապում ե իր բախտը Խորհրդային Ռուսաստանի և մյուս Խորհրդային յերկների բանվորների և աշխատավոր գյուղացիների բախտի հետ:

«Արցունքի հովիտ»-արյան ու քաղցի Հայաստանը դաւնում է լայն մասսաների հեղափո-

№ 279. Գրառեպվար 187 թ. Պատ. № 56. Տիրած 4,000

Պետրաք 1V տպարան Լենինականում



2885-87

խական աշխատանքի ու գործի սոցիալիստական հայրենիք։

Իմպերիալիստական պատերազմի և աղքային անընդահատ բախումների հետևանքով քայլայված չայաստանի ժողովրդական տնտեսությունը հընարավորություն ե ստանում արագ կերպով իր վերելքին դիմելու։

Հայ և թուրք աշխատավորը մոռացության տալով մոտիկ անցյալը (Դաշնակցության կողմից ցանած աղքային փոխադարձ ատելությունը), Խորհրդային իշխանության շնորհիվ կողք կողքի լրձվում են մեկ աշխատանքի. կատարում մեկ գործ, վորի անունն ե՝ կոիվ շահագործողների դեմ, աշխատանք հանուն Սոցիալիզմի։

Պարզ ե, վոր սրանով չեր կարելի վերջացած համարել Հայաստանի նոյեմբերյան Հեղափոխությունը։ Բավական չեր միայն ջախջախել թշնամուն քաղաքացիական կովի մեջ. հարկավոր եր ստեղծել նաև հնարավորություններ, վորոնք կապահովելին կատարած նվաճումները և կըստեղծելին բարենպաստ պայմաններ հետագայի սոցիալիստական շինարարության համար։

Այդ ե պատճառը, վոր հեղափոխության առաջին հենց որից հայ բանվորն ու աշխատավորը իր խորհրդային յերկիրը, իր Խորհրդային պետառությունն ե կառուցում։

Յեվ այս ասպարեզում մեր ունեցած բոլոր հաջողությունները պետք ե գլխավորապես նրանով բացատրել, վոր Խորհրդային իշխանությունն ինքը բանվորների և գյուղացիների իշխանությունն ե, վոր նա գործում ե յելնելով միայն բանվորների և գյուղացիների շահերից։

ԳԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԳՐԻ ՅԵՆ ԱԲՆՎԱՌ

Բոլոր այն նվաճումները, վոր ձեռք բերին հեղափոխության հետևանքով Հայաստանի բանվորներն ու գյուղացիները «գրի յեն առնված», ինչպես ասում եր ընկ. Լենինը, Խորհրդային Հայաստանի Սահմանադրության մեջ։

Սակայն սխալ կըլինի, յեթե մենք մեր Սահմանադրությունն ընդունենք վորպես միայն մեր անցյալն արձանագրող մի պատմական թուղթ։

Մեր Սահմանադրությունը՝ գրի առնելով անցյալ նվաճումները, գործում ե այսոր, գործելու յե վաղը, քանի կա և գյուղություն ունի Պրոլետարական Պետությունը։

Ի՞ՆՉ Ե ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրությունն այն հիմնական որենքն ե, վորով կաղմակերպված ե և վորի հիման վրա գործում ե այս կամ այն իշխանությունը։

Սահմանադրություն չկա այնտեղ, ուր յերպի ամբողջ իշխանությունը գտնվում է միապետի ձեռքում, վորովհետև միմիայն նրա կամքնու բոնությունն են հանդիսանում յերկրի միակ որենքը:

Սահմանադրություններ գոյություն ունեն մի շարք բուրժուական յերկրներում. Սահմանադրություն գոյություն ունի և մեզ մոտ:

Այդ յերկու տեսակ Սահմանադրությունների մեջ կան խոշոր տարբերություններ:

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՀԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶԵՎ

Բուրժուական Սահմանադրություն կամ բուրժուազիայի հիմնական որենքը վորոշում եւ տիրող դասակարգի (փոքրամասնության) իշխանության ձեր և նրա սահմանները շահագործվող ու չունեղը դասակարգի վրա:

Խորհրդային Սահմանադրությունը վորոշում եւ բանվոր դասակարգի և աղքատ գյուղացության (մեծամասնության) գերիշխանության սահմանները շահագործող դասակարգի վրա:

Բուրժուական Սահմանադրությունը նպատակ ունի հաստատել բուրժուազիայի տիրապե-

տությունը մարդկության մեծամասնության վրա:

Խորհրդային Սահմանադրությունը նպատակ ունի վերջ դնել բոլոր դասակարգերի գոյությանը և փոխարինել բուրժուական պետությունն ազատ սոցիալիստական հասարակությունով, ուր բոլոր մարդիկ ազատ կըլինեն ու հավասար կերպով կողտավեն իրենց տրամադրության տակ յեղած նյութական բոլոր բարիքներից:

Բուրժուազիայի տիրապետությունը և շահագործումն իրականում հասնում է ավելի լայն չափերի, քան այդ նախատեսնված եւ և ձեւակերպված նրա սահմանադրության մեջ, վորովհետև բուրժուազիան թագյնում եւ իր պետության և իշխանության դասակարգային բնույթը:

Խորհրդային Սահմանադրությունը ձևակերպում եւ սպոլետարիատի և աղքատ գյուղացության գերիշխանությունը համապատասխան իրականության և կարիք չունի թագյնելու Խորհրդայական իշխանության դասակարգային բընույթը:

Հ. Ա. Խ. 4. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել և 1922 թվի փետրվարի 2-ին Հայաստանի

Բանվորների, Գյուղացիների և կարմիր Բանակայինների Պատգամավորական Խորհուրդների 1-ին համագումարի կողմից և նրանից հետո յենթարկվել ե մի շարք փոփոխությունների:

ԻՆՉՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵ ԿՈՉՎՈՒՄ Ե ՍՈՅԵԱԼԻՍԱԿԱՆ

Յերբ ասում ենք Սոցիալիստական Հայաստան, դա չի նշանակում, վոր Հայաստանում արգեն գոյություն ունի սոցիալիզմ, վոր յերկրում վերացված են արդեն բոլոր դասակարգերը:

Սոցիալիստական ե կոչվում Հայաստանը նրա համար, վոր Հայաստանի բանվորներն ու պյուղացիները իրենց վերջնական նպատակ են դրել վերացնել դասակարգերի գոյությունը, ըստեղծել ազատ սոցիալիստական հասարակարգ։ Ուրիշ խոսքով՝ Հայաստանը կոչվում ե Սոցիալիստական, վորովհետև նաև թեակոխել և Սոցիալիզմի ճանապարհը։

ԻՆՉՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵ ԿՈՉՎՈՒՄ Ե ԽՈՐՃՐԴԱՅԻՆ

Հայաստանը կոչվում ե Խորհրդային Հանրապետություն, վորովհետև յերկրի ամբողջ իշխանությունը պատկանում է Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների կողմից ընտրված Պատգամավորական Խորհուրդներին։

8

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

Գյուղական խորհուրդը հանդիսանում է Խորհրդային իշխանության առաջին բջիջը գյուղում և ընտրվելով տվյալ գյուղի ընդհանուր ժողովի կողմից, ղեկավարում ե գյուղի աշխատանքերը, համաձայն Խորհրդային իշխանության ընդհանուր կառավարական գծի և նրա ցուցմունքների։

Գյուղական Խորհրդում ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն միայն աշխատավոր գյուղացիներ 19 տարեկանից (թե տղամարդ, թե կին)։

Գյուղխորհոդում ընտրվելու և ընտրելու իրավունքից զրկվում են գյուղի շահագործողները (կուլակները), նախկին ցարական ժանդարմոնները, քյոխվաները, հոգևորականությունը և խորհրդային քրեական դատարանների կողմից ընտրական իրավունքից զրկվածները։

ՖԱԼԱԳԱՅԻՆ ԽՈՐՃՈՒՐԴ

Քաղաքային Խորհուրդը Խորհրդային իշխանության առաջին բջիջն ե քաղաքում. ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն քաղաքի աշխատավորները (բանվորներ, ծառայողներ) նույնպես 18 տարեկան հասակից։

Քաղխորհոդում ընտրելու և ընտրվելու ի-

9

բավունքից զրկվում են քաղաքի շահագործողները (բուրժուական, առևտրականները), հոգևորականությունը, ցարական ուժիմի պաշտոնյանները և Խորհրդային Քրեական Դատարանների կողմից ընտրողական իրավունքից զրկվածները:

Հայաստանում գոյություն ունի 2 Քաղաքային Խորհուրդ. 1. Յերևանում և 2. Լենինականում։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՆ ԵԼ ՈՒՆԻ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐԸ

Այժմ վոչ մի բուրժուական յերկրում դորքնիրավունք չունի ընտրելու իր ներկայացուցիչները յերկրի իշխանությանը մասնակցելու համար։

Միայն Խորհրդային յերկրներում և, վորկարմիր բանակն ունի այդ իրավունքը։

Բուրժուազիան զրկում է զորքին քաղաքական իրավունքներից, նպատակ ունենալով հեռու պահել նրան քաղաքականությունից, մթագնել նրա դասակարգային գիտակցությունը և ծառայեցնել նրան իր շահերի պաշտպանության համար։

Խորհրդային յերկրներում Կարմիր բանակը կազմված է լինում նույն յերկրի բանվորներից, ու գյուղացիներից, պաշտպանում է իր հաները,

այդ պատճառով ել չի կարող չմասնակցել յերկրի կառավարման գործին։

Կարմիր բանակը առանձին սահմանված կարգովներկայացուցիչներն ելնութում Խորհուրդների համար։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՇՐՋԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅԵՎ ՇՐՋԳՈՐԾԿՈՄ

Տվյալ շրջանի ամեն մի գյուղական խորհուրդը ուղարկում է իր ներկայացուցիչները շըրջանային Խորհուրդների Համագումարները, վորհանդիսանում և Շրջանի ամենաբարձր իշխանությունը և շրջանի բոլոր խորհուրդների ներկայացուցիչը։

Շրջանային Համագումարն ընտրում է շըրջանի գործերը ղեկավարելու համար Շրջանային Գործադիր կոմիտե, վորին և պատկանում է շրջանի ամբողջ իշխանությունը, մինչև նոր Շրջանային Համագումարը։

Բացի այդ, Շրջանային Համագումարն ընտրում է նաև իր ներկայացուցիչները Խորհուրդների Գավառային Համագումարի համար։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅԵՎ ԳԱՎԳՈՐԾԿՈՄ

Խորհուրդների Գավառային Համագումարը

կազմվում ե գավառի բոլոր շրջանային խորհուրդների համագումարների ներկայացուցիչներից:

Այն գավառներում, ուր կան նաև քաղաքալին խորհուրդները, նրանք ուղարկում են Խորհուրդների Գավառային համագումար իրենց ներկայացուցիչներին անմիջապես:

Խորհուրդների Գավառային Համագումարը հանդիսանում է Գավառային իշխանության ամենաբարձր մարմինը, վոր ընտրում է գավառի գործերը ղեկավարելու համար Գավառային Գործադիր կոմիտե, վորին և պատկանում է գավառի ամբողջ իշխանությունը գավառային մեկ համագումարից մինչև մյուսը:

Գավառային Խորհուրդների Համագումարը ընտրում է նաև իր ներկայացուցիչները Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր բանակայինների Պատգամավորների Խորհուրդների Համագումարի համար:

Հ. Ս. Խ. Հ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Բանվորների, Գյուղացիների և Կարմիր բանակայինների Պատգամավորների Խորհուրդների Համագումարը կազմվում է Գավառային Համագումարների ներկայացուցիչներից և հանդիսանում է յերկրի Գերագույն

Այս Համագումարը հանդիսանալով յերկրի տերը, լիազորություններ ունի քննելու ամեն մի հարց, վոր այսպես թե այնպես կատ ունի Հ. Ս. Խ. Հանրապետության հետ:

Խորհուրդների Համագումարը քննում է գլոխավորապես յերկրի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքին վերաբերող հիմնական հարցերը և տալիս է այդ հարցերի սկզբունքային լուծումն, թողնելով գործնականը իր կողմից ընտրված կենդգործկոմին:

Հ. Ս. Խ. Հ. Խորհուրդների Համագումարն ընտրում է յերկիրը կառավարելու համար իր կենդրոնական Գործադիր կոմիտեն, վորի անդամների քանակը վորոշում է ամեն անգամ ինքը Համագումարը:

Կենդրոնական Գործադիր կոմիտեյին եղանակնում յերկրի ամբողջ իշխանությունը Խորհուրդների մեկ համագումարից մինչև մյուսը:

ԿԵՆԴԳՈՐԾԿՈՄ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՃ

Կենդգործկոմն աշխատում է նստաշրջաններով, վոր տեղի յեն ունենում տարեկան առնվազն չորս անգամ:

Կենդգործկոմն իր կազմից ընտրում է Կենդգործկոմի Նախագահություն և ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

Ժողկոմիսորի մեջ են մտնում բոլոր ժողովական կոմիսարները:

Ժողկոմիսորի հանդիսանում և կենդգործկոմի կառավարչական մարմինը:

Ժողկոմիսորը զատ-զատ և ժողկոմիսորն ամբողջությամբ իրենց գործունեության համար պատասխանատու յեն կենդըռնական Պործադիր Կոմիտեյի և նրա Նախագահության առաջ:

Կենդգործումն իր գործունեության համար պատասխանատու յե Հ. Ա. Խ. Հ. Պատգամավորների Խորհուրդների Համագումարի առաջ:

Հայաստանի կենդըռնական Պործադիր Կոմիտեյի Նախագահն և ընկ. Արտաշես Կարինյանը.

Հայաստանի Ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահն և՝ ընկ. Սաքո Համբարձումյանը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱԿՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև Ասդրկովկասյան Խորհրդային Հանրապետության և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն կազմելը — Խորհրդային Հայաստանը կառավարվում եր Հ. Ա. Խ. Հ. Սահմանադրության հիման վրա:

Այժմ Խորհրդային Հայաստանը կառավար-

վում և յերեք Սահմանադրությունների հիման վրա:

1. Հայաստանի Սև Սահմանադրության.

2. Անդրկովկասյան Սֆեր Սահմանադրության.

3. Սև Միության Սահմանադրության:

Բոլոր այդ յերեք Սահմանադրությունները վոչ միայն չեն հակառակ մեկը մյասին, այլ ընդհակառակ յերեքը միասին ձևակերպում են մեր Խորհրդային Պետությունը և այդ տեսակետից կազմում են Միասնական Խորհրդային Սահմանադրությունը:

ԻՆՉՈՐ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԵՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԵԴԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային յերկրների 5 տարվա գոյության փորձը և Հեղափոխության անցած ուղիները ապացուցեցին բոլոր Խորհրդային յերկրների բանվորներին և գյուղացիներին, վոր առանց այդ յերկրների ույժերի միացման, առանց միասնական Խորհրդային Պետության անկարելի յեամբապնդել Հեղափոխության նվաճումները և հնարավորություններ ստեղծել տնտեսական զարգացման համար:

Հոկտեմբերյան Պրոլետարական հեղափոխության հետևանքով ամբողջ յերկիրը բանժանվեց յերկու զինվորական բանակների—կապիտալիստական և սոցիալիստական:

Համաշխարհային բուրժուազիան զգալով այն վտանգը, վոր սպառնում ե պրոլետարական հաղթական հեղափոխությունը, կազմակերպում ե միասնական հականեղափոխական ճակատ Խորհրդային յերկրների դեմ:

Բուրժուազիայի միասնական ճակատին հարկավոր եր հակադրել պրոլետարիատի և աղքատ գյուղացիների միասնական ճակատ:

Բացի այդ առանձին խորհրդային յերկրների տնտեսական զարգացման շահերը նույնպես պահանջում եին Խորհրդային իշխանություններից միացնել բոլոր տնտեսական շինարարական աշխատանքները, վորապեսզի ավելի կազմակերպված կերպով առաջ տարվի տնտեսական վերելքը:

Յեթե տնտեսապես հետամնաց Խորհուրդային Հայաստանի համար անհնար եր դեռ յերկար տարիների ընթացքում վերականգնել, որինակ մեր լեռնային արդյունաբերությունը (Զանգեզուրի, Ալանվերդու)՝ Խորհուրդային յերկրների տնտեսական ույժերի միության շնորհիվ մենք այդ հնարավորությունն ստացանք:

Մյուս կողմից Խորհրդային այլ յերկրներէ ծանր արդյունաբերության վերականգնումը կարիք ուներ մեր պղնձին, մենք տվինք:

Այս Խորհրդային յերկրների այս փոխադարձ տնտեսական ոգնությունը և կապը մեծապես նպաստեցին մեր ընդհանուր տնտեսական վերելքին:

Սրանք են Անդրկովկասյան Ֆեղերացիան և Խորհրդային Միությունն ստեղծելու գլխավոր պատճառերը:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ

Մեր թշնամիները հասկանալով, թե ինչ ոգուտներ ե տալիս մեզ Խորհրդային Հանրապետությունների Միությունը, սկսեցին գոռալ այն մասին, թե Խորհրդային Հայաստանը անկախ չե, թե «Ազատ Հայաստանը» կործանվեց:

Վոր անկախության մասին ե նրանց խոսքը՝ իրենց կառավարության որով անկախ եր Հայաստանը:

Այս ժամանակ Հայաստանը կախումն ուներ միջազգային բուրժուազիայից և նրա թելազրանքով եր Հայաստանը վողողվում արդար մեջ ու կոտորվում քաղցից:

Այժմ Հայաստանը միանգամայն անկախ ե



իր թշնամիներից, և մի՞թե այդ ե վատը. մի՞թե
այդ չե իսկական անկախությունը:

Իսկայն հանգամանքը, վոր Խորհրդային Հայ-
աստանն այսոր միություն և կազմել իր բարե-
կամների հետ, մյուս Խորհրդային յերկրների բան-
վորների և գյուղացիների հետ, այդ ավելի և
ույժ ե տալիս նրան, ավելի ևս ամրացնում ե
Հայաստանի Խորհրդային իշխանությունը:

Խորհրդային Միությունը Հայաստանի հա-
մար այն նշանակությունն ունի, վոր հնար և
տալիս նրան ամրապնդել և պաշտպանել իր
հեղափոխությունը թշնամիներից:

Այս ե իսկական անկախությունը:

Հ. Ա. Խ. Զ. ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ Ե

Խորհրդային յերկրների այս միությունը
միենույն ժամանակ հանդիսանում է զեղեցիկ
ապացույց այն բանի, թե ինչպիս կոմմունիս-
տական կուսակցությունը և Խորհրդային իշխա-
նությունը լուծում են ազգային հարցը, կանգ
չառնելով ազգերի ինքնորոշման առաջ, յեթե
անգամ այդ ինքնորոշումը պահանջում է կա-
տարյալ առանձնացում և անկախություն ավյալ
ազգի համար:

Նախկին ցարական Ռուսաստանի հողի վրա
Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով ա-
ռաջ են գալիս մի շարք հանրապետություններ
(թվով մոտավորապես 50), սակայն այդ հան-
գամանքը վոչ միայն չի քայլայում հեղափո-
խության միասնական ճակատը, այլ ընդհակա-
ռակը՝ հնուրավորություն տալով այդ ազգու-
թյունների բանվորներին ու գյուղացիներին ազ-
գովին զարգանալու, ավելի ևս ամրապնդում ե
հեղափոխության միասնական ճակատը:

Այս դրությունը հնարավոր է միայն Խոր-
հրդային իշխանության որով, վորովհետև միմի-
այն նա կարող ե ապահովել բալոր ազգություն-
ների համար հավասար իրավունքներ:

Աշխատելով բարձրացնել քաղաքականապես,
անտեսապես և կուլտուրապես հետամնաց ազ-
գերը և հասցնել նրանց ավելի զարգացած և ա-
ռաջ գնացած ազգերին, Խորհրդային իշխանու-
թյունը լուծեց ազգային հարցն այնպես, ինչպես
անկարող եր այդ հարցը լուծել այսոր վորեն
այլ իշխանություն:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԳԵՎ ԽՈՐ- ՃՐԴՅԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՑՐԻՆ ԻՐԵՆՑ ՎՐԱ ԴՐԱՄ ՀՈՒՅՍԵՐԸ

Շնորհիվ Անդրկովկասյան Ֆեդերացիայի և
Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-

Թյունների Միության հնարավոր յեղավ ամբապնդել հեղափոխության միասնական ճակատը և զգալիորեն բարձրացնել յերկրի տնտեսությունը:

Յեվ այսոր շնորհիվ բանվոր դասակարգի և աղքատ գյուղացության ույժերի համախմբման, Խորհրդային Հանրապետությունների Միությունը մի այնպիսի ույժ է, վորի հետ հաշվի յեն նոտում և վորին ստիպված են ճանաչելու անկախ իրենց կամքից բուրժուական բոլոր խոշոր պետությունները (Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան ևայլն):

ՈՎԳԵՐ ԵՆ ՄՑՆՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՈՐ- ՃՐԴԱՅԻՆ ԳԵՂԵՐԱՅԻԱՑԻ ՄԵԶ

Անգրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնում
են՝ 1. Խորհրդային Հայաստանը, 2. Խորհրդա-
յին Վրաստանը, 3. Խորհրդային Ադրբեջանը:

Բացի այդ Անգրկովկասյան Ֆեդերացիայի
հետ սերտ կերպով կապված են Վրաստանի մի-
ջոցով՝ 1. Խորհրդային Արխագիսան, 2. Խորհրդա-
յին Աջարիստանը, 3. Խորհրդային Ռսեթիան:

Աղբբեջանի միջոցով՝ 1. Խորհրդային Ղա-
րաբաղը, 2) Խորհրդային Նախիջևանը:

ՈՎԳԵՐ ԵՆ ՄՑՆՈՒՄ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵ- ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Խորհրդային Հանրապետությունների Միու-
թյան մեջ են մտնում՝

1. Խուսաստանի Խորհրդային Սոցիալիստա-
կան Ֆեդերատիվ Հանրապետությունը.

2. Ուկրայնայի Սոցիալիստական Խորհրդա-
յին Հանրապետությունը.

3. Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդա-
յին Հանրապետությունը.

4. Անդրկովկասյան Սոցիալիստական Խոր-
հրդային Ֆեդերատիվ Հանրապետությունները
(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան):

5) Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհր-
դային Հանրապետությունը.

6) Թյուրքմենստանի Սոցիալիստական Խոր-
հրդային Հանրապետությունը:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Անգրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող
յերեք հանրապետությունները, այսինքն՝ Խոր-
հրդային Հայաստանը, Խորհրդային Վրաստանը
և Խորհրդային Ադրբեջանն իրենց Հանրապետա-
կան Խորհրդների համագումարում ընտրում են
ներկայացուցիչներ Անգրկովկասի բանվորների,
գյուղացիների, կարմիր բանակայինների և նա-
վաստիների պատգամավորական Խորհրդների
համագումարի համար:

Այդ համագումարը հանդիսանալով **Անդըր-**
կովկասի **Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհր-**
դային Հանրապետության Գերագույն իշխանու-
թյունը իր հերթին ընտրում և Անդրկովկասյան
Կենդրոնական Գործադիր Կոմիտե:

Անդրկենդգործկոմն իր կողմից ընտրում և
Կենդգործկոմի նախագահություն և **Ժողովրդա-**
կար Կոմիսարների Խորհուրդ:

Անդրկենդգործկոմին և պատկանում **Անդր-**
կովկասյան Փեղերացիայի ամբողջ իշխանու-
թյունը Խորհուրդների մեկ համագումարից մին-
չև մյուսը:

Անդրկովկասյան Պատգամավորական Խոր-
հուրդների Համագումարն ընտրում և իր ներ-
կայացուցիչները Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետությունների Միության Պատգամա-
վորների Խորհուրդների Համագումարի համար:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆ- ՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետությունների **Միության մեջ մասնող**
վերը հիշատակված 6 **Սոցիալիստական Խորհրդ-**
ային Հանրապետություններն իրենց Հանրապե-
տական Համագումարում ներկայացուցիչներ են
ընտրում Սոցիալիստական Խորհրդային Հանրա-

պետությունների **Միության Պատգամավորների-**
Խորհուրդների Համագումարի համար:

Այդ պատգամավորները միասին կազմում են
Խորհուրդային Հանրապետությունների Միու-
թյան Պատգամավորների Խորհուրդների Համագու-
մարը:

Այս Համագումարը հանդիսանում է Միու-
**թյան Գերագույն իշխանությունը, վոր ընտ-
րում և Սիէ՛Մ Կենդրոնական Գործադիր Կոմիտե**
և հանձնում նրան Միության ամբողջ իշխանու-
թյունը մեկ համագումարից մինչև մյուսը:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎՈՒՄ Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Միութենական Կենտրոնական Խորհրդից կազմում ե-
յերկու մասից՝

- 1) **Միութենական Խորհրդից.**
- 2) **Ազգությունների Խորհրդից:**

Միութենական Խորհուրդն ընտրվում է Սիէ
Միության Խորհուրդների համագումարի կողմից:

Ազգությունների Խորհուրդն ընտրվում է
Ազգային Հանրապետությունների Խորհուրդների
համագումարում հինգ-հինգ հօգի ամեն մեկից
և ամբողջ կազմով վավերացվում է Միութենական:

Պատգամավորների Խորհուրդների համագումարի
կողմից:

Ինչպես Միութենական Խորհուրդը, այնպես
ել Ազգությունների Խորհուրդներն ունեն իրենց
արուանձին նախագահությունները:

Բոլոր հարցերը, որինագծերը քննության են
առնվում միաժամանակ թե Միութենական Խոր-
հրդում և թե Ազգությունների Խորհրդում:

Որինագիծը կարող ե դառնալ որենք միայն
այն ժամանակ, յերբ հավանություն ստանա այդ
յերկու խորհուրդների կողմից:

Միութենական Խորհուրդը և Ազգություն-
ների Խորհրդը միասին կազմում են Միու-
թյան կենդրուական Գործադիր Կոմիտեն իր
նախագահությունով և նրա առաջ պատասխանա-
տու Փողովրդական Կոմիսարների Խորհրդով:

Համամիութենական կենդրութեային վեց նա-
խագահ ունի, վորոնք հանդիսանում են վեց Սո-
ցիալիստական Խորհրդային Հանրապետություն-
ների ներկայացուցիչներ:

Համամիութենական կենդրուական Գործադիր
Կոմիտեյի ականավոր և ամենահին նախագահն
և ընկ. Միխայիլ Իվանովիչ Կալինինը:

Համամիութենական Ժողովրդական Կոմիսար-
ների Խորհրդի նախագահ ե ընկ. Ալեքսեյ Իվա-
նովիչ Ռիկովը:

ԽՈՐԴՐԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Խորհուրդների հերթական համագումարները
տեղի յեն ունենում տարին մեկ անգամ:

Խորհուրդների արտակարգ համագումարները
հավաքվում են ըստ կարիքի մեկ հերթական հա-
մագումարից մինչև մյուսը:

Խորհուրդների համագումարները հրավիրվում
են կենդրուական Գործադիր Կոմիտեյի կամ նրա
նախագահության վորոշմամբ և կամ Ժողովրդա-
կան Կոմիսարների Խորհրդի պահանջով:

Ի՞ՆՉ ՏԵՂ Ե ԲՈՆՈՒՄ ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱ- ՆԱՒԹՅԱՆ ՄԵԶ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ- ԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսանք, Խորհրդային և վոչ մի
Սահմանադրության մեջ խոսք չկար Կոմմունիս-
տական կուսակցության և նրա իրավունքների
մասին:

Սակայն մենք գիտենք, վոր Կոմմունիստա-
կան կուսակցությունը միյակ ղեկավարող կա-
ռավարական կուսակցությունն ե Խորհրդային
յերկիրների սահմաններում:

Արդյոք Կոմմունիստական կուսակցությունն
իրավունք ունի՝ Խորհրդային իշխանության վրա:

Պրոլետարական հեղափոխության թշնամիները գրում և խոսում են այն մասին, վոր Խորհրդային իշխանությունը վոչ թե բանվորների և գյուղացիների իշխանություն ե, այլ կոմմունիստական կուսակցություն։

Ճշիշտ ե արդյոք այս, թէ վոչ։

Կոմմունիստական կուսակցությունը հանդիպանալով բանվոր դասակարգի կուսակցություն, ղեկավարում ե նրան, վորպես նրա դիտակից, կազմակերպված և առաջապահ գունդ։

Բանվոր դասակարգը ղեկավարում ե գյուղացությանը։

Այս շղթան (Կոմմունիստական կուսակցություն—բանվոր դասակարգ—գյուղացություն) գուր չի գալիս Խորհրդային իշխանության թշնամիներին և նրանք աշխատում են այդ ընդհանուր շղթայի առանձին ողակները մեկը մյուսին հակադրելով, ճեղքել ամբողջ շղթան։

Հակադրելով կոմմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգին և գյուղացությանը, նրանք ասում են, վոր Խորհրդային իշխանությունն այն ժամանակ միայն կըդառնա բանվոր և գյուղացիների իշխանություն, յերբ Խորհրդներից դուրս հանվեն կոմմունիստաները։

Այս պատճառով ել ամեն մի բանվոր, ամեն

մի գյուղացի պարզ պետք ե հասկանա, վոր առանց կոմմունիստական կուսակցության չկա Խորհրդային իշխանություն։

Առանց բանվոր դասակարգի առաջապահ գնդի ու նրա ղեկավարի մասնակցության Խորհրդների աշխատանքներին՝ Խորհրդները շատ հեշտ կերպով կը գրավվեն բանվոր դասակարգի թշնամիների կողմից։

Այդ նրանք լավ գիտեն և դրա համար ել խոսում են կոմմունիստական կուսակցության իշխանության մասին, նրա առանձին իրավունքների մասին։

Կոմմունիստական կուսակցությունն ե, վորը ղեկավարում ե բանվոր դասակարգի հեղափոխական պայքարն ու գործը։

Այդ ղեկավարությունը կոմմունիստական կուսակցությունը միշտ ունեցել ե և պետք եւնենա, քանի վոր գոյություն ունեն դասակարգեր, քանի դեռ կան Խորհրդային իշխանության թշնամիները։

Ուրեմն խոսել կոմմունիստական կուսակցության ինչ վոր առանձին իշխանության մասին և հակադրել այն Խորհրդային իշխանությանը, կընշանակե վոչ միայն շըմբոնել կոմմունիստական կուսակցության եյությունը, Խոր-

հրդային իշխանության կազմակերպչական ձևերը, այլ ընդհակառակը՝ լինել թշնամի այդ իշխանության:

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՄԵՐԻՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Լենինյան կոմմունիստական Յերիտասարդական Միությունը հանդիսանում է յերիտասարդ բանվորների և գյուղացիների միությունը, վորը նպատակ ունի դասակարգային կովի հողի վրա խորհրդային յերկրների յերիտասարդությանը կազմակերպելով, նրան մասնակից դարձնել սոցիալիզմի պայքարին — պատրաստել նրանցից ապագայի բանվոր դասակարգի պայքարի ղեկավարներ:

Յեթե կոմմունիստական կուսակցությունը, ինչպես տեսանք վերը, ղեկավարում է Խորհրդային իշխանությունը, բանվորների և աղքատ գյուղացիների պայքարը, ապա Լենինյան կոմմունիստական Յերիտասարդական Միությունը չհանդիսանալով Խորհրդային իշխանության ղեկավարն ու առաջնորդը, պետք է հանդես գա և հանդես ե գալիս Խորհրդային իշխանությանն ու ժանդակողի, ոգնողի ղերում նրա բոլոր աշխատանքների ասպարեզում:

Թե իր քաղաքական ծրագիրը և թե ամենորյա կազմակերպչական ու դաստիարակչական աշխատանքները լենինյան Յերիտասարդական Միությունը տանում ե կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ ու նրա գրոշի տակ:

Լենինյան կոմմունիստական Յերիտասարդական Միությունը հանդիսանալով կոմմունիստական կուսակցության ապագան, նրա վաղվարը, պետք ե վոր յուրացնի կոմմունիստական կուսակցության հեղափոխական պայքարի փորձը, նրա կազմակերպչական ձևերն ու յեղանակները.

Հենց այդ նպատակի համար ել կովում, գործում և աշխատում ե ամեն մի կոմմունիստական Յերիտասարդական Միության անդամ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՑՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆԳՆԵՐԸ

Խորհրդային իշխանությունը հաղթահարելով իր թե ներքին և թե արտաքին թշնամիներին, զինվորական ճակատից անցնում ե հեղափոխության 2-րդ կամ տնտեսական ճակատին:

Կարճ ժամանակվա ընթացքում, շնորհիվ Խորհրդային յերկրների բանվորների և աղքատ-

գյուղացիների ջանքերի, վերականգնվում ե համաշխարհային և ասլա քաղաքացիական պատերազմների հետևանքով բայց այլ ված տնտեսությունը և արագ կերպով մոտենում ե նախապատերազմական չափերին:

Նոր տնտեսական քաղաքականությունը, վորին այդ նպատակով անցավ Խորհրդային իշխանությունը, միանդամայն արդարացրեց իրեն:

Յերկրի ընդհանուր տնտեսական զարգացման հետ միասին քաղաքականապես զարգանում և ամրանում ե բանվոր դասակարգը:

Նույն այդ պատճառով խորհրդային գյուղայական բարորակին այլ պատկեր ե ներկայացնում, յեթե համեմատենք 1919—20 թվականների Խորհրդային գյուղի հետ:

Գյուղացիական տնտեսությունը զարգանալով քանակավես, փոխում ե իր դեմքը:

Գյուղը մտնում ե ապրանքային շրջանառության մեջ, առաջ ե գալիս գյուղի և գյուղառության դասակարգային շերտավորում:

Մեկ կողմից արդյունաբերության և մյուս կողմից տնտեսության զարգացման շնորհիվ, հեղափոխության համար ստեղծվում ե նոր կացություն, վորը պահանջում ե Խորհրդային իշխա-

նությունից յերկիրը ղեկավարելու նոր յեղանակ՝ ներ ու նոր ճանապարհներ:

Այդ նոր ճանապարհների նպատակն ե ավելի ես ամրացնել քաղաքի և գյուղի, բանվոր դասակարգի և գյուղացության թե բաղաքական և թե տնտեսական կապը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՆՈՐ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քիչ առաջ շեշտված ընդհանուր տնտեսական վերյելքի հետևանքով բանվոր դասակարգի և գյուղացության մեջ առաջ ե գալիս մինչեւ այդ չտեմնված ակտիվություն և ձգում դեպի քաղաքական հասարակության խնդիրներն ու աշխատանքները:

Կոմմունիստական կուսակցության և Խորհրդագործին լիշտանության նպատակն ե լայն աշխատավորական մասսաների կողմից հանդես բերած քաղաքական այդ ակտիվությունը ոգտագործել Խորհրդային շինարարության, Խորհրդային պետականության առպարեզում:

Դրա համար ե, վոր Խորհրդային իշխանությունն այսոր անհրաժեշտ ե գտնում անցնել լայն մասսաների ղեկավարելու նոր յեղանակներին:

Այդ նոր յեղանակները պետք ե կայանա-

նախ և առաջ նրանում, վոր անպայմանորեն ապահովեն ամեն մի բանվորի, ամեն մի աշխատավոր գյուղացու ակտիվ մասնակցությունը Խորհրդային և Տնտեսական շինարարության մեջ:

Մի շարք միջոցներ, վորոնք առաջադրվում են Խորհրդային իշխանության կողմից այս նպատակի համար, այն ե՛ Խորհուրդների աշխատացում, գյուղի հեղափոխական որինականության ուժեղացում, գյուղին ազնիվ ղեկավարներով ապահովելը, — այս բոլոր միջոցները պետք է ծառայեն վերը հիշված ընդհանուր նպատակին՝ ղեկավարելու յեղանակները հարմարացնել լայն մասսաների պահանջներին:

Խորհրդային գյուղն այսոր կարիք ունի վոչ այնքան հրամանների, վորքան առողյա պրակտիկ գործի ու որինակի:

Այսոր գյուղը կարող է ղեկավարել վոչ թե նա, ով գիտե հրամայել, այլ նա, ով կարող է ստեղծել լայն հիմքերի վրա դրած տնտեսություն և դրանով որինակ ծառայել բոլոր գյուղացիներին:

Խոսք չի կարող լինել այն մասին, վոր շուտափույթ կերպով գյուղում պիտի վերացգեն Խորհրդային իշխանության ներկայացուցիչների այն մի շարք ապօրինությունները, վորոնք ընդ-

հանուր տոմամբ խանգարում են բանվոր դաստիարակի և գյուղացության կապը:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԻՏԻ ԼՇՎԻ ԲՆՔԸ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային որենքներն այսոր այն հեղափոխական հրամաններն են, վորը տալիս է Խորհրդային իշխանությունը աշխատավորական լայն մասսաներին կյանքում Խորհրդային իշխանության ղեկավարությամբ նոր ուղիներ հարթելու և ամրապնդելու համար:

Ահա թե ինչու այդ որենքները պետք է իմանա ամեն մի քաղաքացի, ամեն մի աշխատավոր գյուղացի և նամանավանդ ամեն մի կոմմունիտ և Յերիտ. Միության անդամ:

Խորհրդային գյուղում այսոր կարող է մասսաների համակրանքը վայել այն կոմմունիտը, այն կոմյերիտիտիության անդամը, վորը գյուղացու ամեն մի դիմումին պատասխան կըտա, թե ինչպես և ինչ ճանապարհով և լուծում Խորհրդային իշխանությունը նրան հետաքրքրող հարցը:

Հեղափոխական որինականության հարցը այս տեսակետից դադարում և գառնալ միայն Խորհրդային Արդարադատության մարմինների գործ և վերածվում է ընդհանուր քաղաքական խնդրի:

Դյուղը կարող ե անցնել հեղափոխական ուրինականության և այդ որինականությունն ապահովված կը լինի միայն այն ժամանակ, յերբ այդ գործին կը լծի ինքը բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացությունը:

ՊԵՏք Ե ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Որըստորե շատանում և բարդանում ե ամեն մի կոմմունիստ և Ցերիտ. Միության անդամի աշխատանքները գյուղում:

Խորհրդային աշխատավորից գյուղը պահանջում ե, և իրավունք ունի պահանջելու, վոր նանախ և առաջ տեղյակ լինի Խորհրդային իշխանության քաղաքականությանը: Այլապես գյուղի աշխատողն անկարող ե այսոր ղեկավարել գյուղի աշխատավորական մասսաներին և ստիպված պիտի լինի նորից բոնել հրամանների ճանապարհը, մի ճանապարհ, վորը միանգամայն մերժվում ե այսոր Խորհրդային իշխանության կողմից և հակասում նրա տարած քաղաքական գծին:

Ամեն մի գյուղական կոմմունիստ և կոմյերիտսմիության անդամ պետք ե քաջ զիտակցի այս ամենը և ըստ այնմ անցնի Խորհրդային գյուղի ղեկավարության:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՐԻ ՄԱՐԴԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Խորհրդային գյուղի շերտավորումը պահանջում ե այսոր ղեկավարություն, վորը պետք ե կայանա վոչ միայն նրանում, վոր ննարավորություններ ստեղծվեն գյուղի տնտեսական զարգացման համար, վոչ միայն նրանում, վոր զարկարգի կոռպերացիայի ուժեղացմանը, վոչ միայն նրանում, վոր բնական կերպով կազմակերպվի գյուղի տնտեսությունը, այլև նրանում, վոր բոլոր այդ աշխատանքներն ունենան դասակարգային բնույթ, դասակարգային իմաստ:

Միանգամայն հրաժարվելով զինվորական կոմունիզմի մնացորդներից գյուղում և կովելով այդ մնացորդների ղեմ, Խորհրդային իշխանությունը յերբեք չի հրաժարվում դասակարգային պայքարը ղեկավարելուց:

Դասակարգային պայքարը գյուղում զարգանում ե, սակայն այդ պայքարը ղեկավարելու կազմակերպչական յեղանակներն ու ձևերը պետք ե փոխվեն:

Այսոր գյուղի դասակարգային պայքարը պետք ե տանել վոչ թե վարչական (հրամանների և արգելանքների), այլ տնտեսական միջոցով:

Հարկավոր և Խորհրդային իշխանության

շահերի տեսակետից և ոգտակար վոչ թե քանդել
տուենք, զյուղի կուլակի տնտեսությունը, արգե-
լել նրան լավ տնտեսություն ստեղծելու, այլ
այդ կուլակի տնտեսությանը հակազրել միջակ
և աղքատ գյուղացու ավելի լավ կազմակերպ-
ված տնտեսությունը:

Այս և գյուղի գասակարգային պայքարի
այսորվա յեղանակը և այդ պայքարն իր ուսերի
վրա նա յե տանում, ով զարկ և տալիս այսոր
գյուղում միջակ և աղքատ տնտեսությունների
բարելավմանը, կոռողերացիայի և փոխադարձ ոդ-
նության կոմիտեների աշխատանքներին:

Կառավարելու նոր յեղանակները հնարավոր
դարձնելու համար Խորհրդային իշխանությունը
տրամադրում է գյուղին բացի ձեռնաս աշխա-
տողներից նաև մի շաբք տնտեսական միջոցներ՝
գյուղատնտեսական վարկ, տուրքերի զգալի ի-
շեցում և շրջանային բյուջե:

Այդ միջոցներից պետք է սպավել կարո-
ղանալ:

Ի՞ՆՉ Ե ԲՅԱՒՁԵՆ

Ամեն մի կառավարություն ունի իր բյու-
ջեն, այսինքն մոտավոր հաշվը իր մուտքի և
յելքի:

Խորհրդային իշխանությունն իր պետական
բյուջեն ունի, գավառային Գործադիր կոմիտե-
ներն ել իրենց գավառային բյուջեն ունեն:


Այսոր Խորհրդային իշխանությունը հնարա-
վորություններ ունի կազմելու նաև գավառակա-
յին կամ շրջանային բյուջեներ, այսինքն՝ տվյալ
շրջանի սպասվելիք մուտքը և յելքը:

Համամիութենական վերջին Խորհրդադների
համագումարը վորոշել և շրջանային բյուջեյի
համար միասնական գյուղատնտեսական հարկից
բաց թողնել 100 միլիոն ռուբլի:

Այս հանգամանքն անջուշա հնարավորու-
կըտա վարոշ չափով կանոնավորել շրջանի թե Խոր-
հրդային և թե տնտեսական աշխատանքները և,
վոր գլխավորն ե, վորոշ կարդ ու կանոն կը մտցը-
նի շրջանի ու նրա գյուղերի աշխատանքների մեջ:

Բացի այդ, գավառակային բյուջեն հնարա-
վորություններ և ստեղծում տեղերում աշխա-
տող ընկերների համար Խորհրդային և տնտեսա-
կան աշխատանքների ասպարիզում:

Շրջանային բյուջեն մեծապես նպաստել և
բանվոր դասակարգի և գյուղացության կապին,
վորի անհրաժեշտությունը սոցիալիզմի հաղթա-
նութիւն համար պարզ և բոլորիս համար:



ՅԵԹԵ ՊԱՀԵՆՔ ՇԼԹԱՆ

Այսպիսով, յեթե ուզենանք Խորհրդային իշխանության կառուցվածքի և նրա նպատակների հետ ծանոթանալուց հետո հարցնել՝ ով ե ղեկավարում Խորհրդային յերկիրները, կըպատասխանենք.

— Խորհրդային յերկիրները ղեկավարում են նույն յերկիրների բանվորները՝ հենված աշխատավոր գյուղացության վրա:

Կոմմունիստական կուսակցությունը ղեկավարում է բանվոր գասակարգը ղեկավարում ե գյուղացությանը:

Բանվոր գասակարգը ղեկավարում ե գյուղացությանը:


Այս շղթան մահացու յե մեր թշնամիների համար:

Ամուր հակենք, վոր չճեղքվի այդ շղթան:

Յեթե պահենք այդ շղթան, մեր վերջնական հաղթանակը ապօհովված ե:

Կոմմունիստ և կոմյերիտմիության անդամ, նորից նվաճիր քո տնտեսական աշխատանքով, քո տնտեսական պայքարի միջոցով Խորհրդային գյուղը:

Դու այդ կանես, վորովհետեւ դու ուզում ես հաղթել. վորովհետեւ դու պիտի հաղթես:



Բառարար Հ. 6-0
ուշ ուշ 6-0:
մայիս համար ու յնու
մայ-

ՀՀ Ազգային գրադարան



NL0192156

ԳԻՆԵ Ե 20 ԿՐՊ